

ՀԱՅԵՐԵՆ ԱՍՏՎԱԾԱԾՆԻ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ 300-ԱՄՅԱԿԻ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՄՍՏԵՐԴԱՄՈՒՄ

Հայ տպագրության զարգացման գործում
անակալից դեր է խաղացել Ամստերդամը,
1660 թվականին հիմնվել է առաջին հայ-
կան տպարանը: Այնտեղ էր, որ ս. էջ-
ածնի միաբանության անդամ Ոսկան վրդ-
անցու ջանքերով հրատարակվեց առաջին
կերեն Աստվածաշունչը: 1966 թվակա-
ն լրացավ Աստվածաշնչի տպագրության
300-ամյակը, և Ամենայն Հայոց կաթողիկո-
սությունը այդ տարեդարձը նշվեց ս. էջ-
ածնում և աշխարհի բոլոր հայկական գա-
ղթներում:

Առանձնապես հետաքրքիր են այն հանդի-
սությունները, որոնք տեղի ունեցան հայե-
ն Աստվածաշնչի տպագրության վայրում՝
այնպիսի երեքմանի մայրաքաղաք Ամս-
տերդամում:

1966 թվականի նոյեմբերի 27-ի առավոտ-
ն Նոլանդիայի հայերից շատերը հա-
յրվել էին Ամստերդամի հայկական հի-
նդեցու առաջ, ուր տեղի ունեցավ տոնա-
ն հանդիսավոր արարողություն՝ Փարիզից
մանած տ. Գյուտ վրդ. Նազաշյանի ղեկա-
րությամբ: Այնտեղ հոգեշնորհ վարդապե-
րացման խոսքից հետո, մոտավորապես
րոպե տևող մի գեղեցիկ ճառով, հանդես
ավ Ամստերդամի քաղաքապետական Դի-
նի պաշտոնյա, Նոլանդիայի հայ գաղու-
պատմության քրտնաջան ուսումնասիրող,
ղգումբ հոլանդացի Ս. Վան Ռուլը: Նա
ղգումբի հետաքրքիր փաստեր բերեց Ոս-
ն Երևանցու տպագրական գործունեու-
ան վերաբերյալ: Այնուհետև տեղեկու-
ուններ հաղորդեց մի շարք նոր նյութերի
սսին, որոնք նոր լույս են սփռում Ամստեր-
ամի երեքմանի հայ գաղութի պատմության
ա: Այդ նյութերի շնորհիվ հայտնաբերվել
նաև այն վայրը, ուր ապրել ու Աստվածա-
նչն է տպագրել Ոսկան Երևանցին: Պարզ-
ում է, որ Ամստերդամի հայոց եկեղեցու
ները այդ ժամանակ մի պահեստ էր, որի
տևում գտնվում էր Ոսկան Երևանցու ապ-
ած վերահիշյալ տունը: Պահեստի այդ շեն-
1713 թվականին գնվեց հայերի կողմից
վերածվեց եկեղեցու և ապա նրան միաց-
ց նաև այդ տունը:

Այնուհետև իր ճառի մեջ Ս. Վան Ռուլը

հորդորեց հայերին դնել երեքմանի հայկական
եկեղեցու շենքը, որ քաղաքապետությունը ե-
կող տարի ծրագրել է քանդել: Խոր ափո-
սանք հայտնելով պատմական այս արժեքա-
վոր հուշարձանի համար, նա առաջարկեց,
որ միևնույն դուռը և մյուս պիտանի պարա-
զաները օգտագործվեն եկեղեցու նոր շենքի
կառուցման մեջ: Վերջում նա իր խոսքը վեր-
ջացրեց ասելով, որ 300 տարի առաջ հայերը
և հոլանդացիները միասին ստեղծել են մի
փոքրիկ պատմություն, որը պետք չէ մո-
ռացության տրվի, այլ ամեն կերպ շարու-
նակվի, և չթողնել, որ հայության հետքերը
կորչեն Ամստերդամում:

Նույն օրը, կեսօրից հետո, ժամը 2-ին,
Գյուտ վրդ. Նազաշյանը պատարագ մատու-
ցեց Ամստերդամի Հին Կաթողիկական եկե-
ղեցում: Իր քարոզում նա վեր հանեց Ոսկան
Երևանցու աղգանվեր, փայլուն գործունեու-
թյունը և կարգաց Ամենայն Հայոց Վեհափառ
Հայրապետի 1966 մարտ 11 թվակրի կոն-
դակը՝ նվիրված հայերեն Աստվածաշնչի ա-
ռաջին տպագրության 300-ամյակին: Պա-
տարագից հետո տեղի ունեցավ հոգե-
հանգստյան պաշտոն:

Երեկոյան ժամը 5-ին քաղաքի հայտնի
սրահներից մեկում Նոլանդիայի հայ գաղու-
թը կազմակերպեց ճաշկերույթ, որի ընթաց-
քում կատարվեցին հայկական երգեր ու պա-
րեր: Ցուցադրվեց մի շարժանկար՝ Հայաս-
տանի մասին, որտեղ հատկապես ուշադրու-
թյուն էր գրավում ս. էջածնի Մայր տա-
ճարի արարողություններին վերաբերող
մասը:

Նոլանդիայի հայ գաղութի այս նշանավոր
իրադարձությանը արձագանքեցին հոլանդա-
կան թերթերը: Ամստերդամի կաթողիկական
թերթ «Նոր օր»-ը 1966 թվականի նոյեմբերի
29-ի համարում մանրամասնորեն նկարա-
գրել է այդ հանդիսությունը՝ տպելով նաև մի
խմբանկար, որի մեջ երևում են Գյուտ վրդ.
Նազաշյանը, Ս. Վան Ռուլը և գաղութի ներ-
կայացուցիչները: Այս հանդեսի նկարագրու-
թյունը լույս տեսավ նաև հոլանդական այլ
թերթերում՝ Ամստերդամի «Ժամանակ», Հա-
ադայի «Հայրենիք» թերթերում և այլն:

ԱՐՄԵՆ ԱՆԱՍՅԱՆ